

Ամուր դդեակս՝ խիստ անառիկ՝ պարսպաւոր.
կանգնեաց յերկրին՝ զօրաց իւրոց՝ պաշտպանաւոր:
† Իսկ գերագանց՝ քան զա՛մ՝ շքեղաւոր.
կազմեաց տաճար՝ երկնահանգոյն՝ տուն հոգևոր:
5 յԱմուր կղզւոջն՝ աղթամարու՝ ծովապարփակ.
նախկին ք՛ղք իշխանանիստ՝ բազմաբնակ:
Անմարտչելի ի թշնամեաց՝ գիւատեսակ.
վանիչ նոցին՝ անհուն գնտին յոյժ այլանդակ:

47. Այլ զտաճարին՝ իսկ ասասցուք՝ զգեղեցկուի՛.
10 զծաղկերանգ՝ ս՛բ պատկերաց՝ քանդակուի՛:
Զանձեռագործ՝ վերնոյ յարկին՝ զնմանութիւն.
զվերին զօրաց՝ ս՛բ զուարթնոց՝ զբնակուի՛:
Յերկրի երկին՝ գեղեցկազարդ՝ լուսաւորօք.
ա՛ծատունկ՝ դրախտ եղեմայ՝ անուշ պտղովք:
15 Եօթնաստեղեան՝ խորան լուսոյ՝ լցեալ փառօք.
պարունակօղ՝ զաստի ընտրեալսն՝ երկնաւորօք:
Հիմուն ըք քո՛ հաստատեցան՝ յականց վանեայց.
չորեք անկիւնք՝ թաւալեցան՝ յընտիր աստեայց:
Պատուաստեցան՝ ազնիւ գունակ՝ ի ս՛բ քարանց.
20 յղկեալ որմունք՝ տանդ սրբուե՛ ի ճարտարաց:
Քառակուսի՛ զիրք ճակատուդ՝ յօրինեցան.
ի քառակի՛ կողմ հայելով՝ համայնգամայն:
Քառաթևին՝ օրինակաւ՝ պահպանական՝
որպէս անունդ՝ իսկ ցուցանէ՛ ըստ յորջորջման:
25 Զորք վեհագոյնք՝ ի յառաքեալսն՝ երկոտասան.
ի փառ ճակատդ՝ յօրինեցան՝ զարմանազան:
Մարդն առաջին՝ ստեղծեալ ձեռամբ՝ արարչական.
Ոյք ի նմանէ՛ յառաջ եկին՝ ընտրեալքն համայն:

47. Քանդակեցան ս՛բ պատկերօք՝ գեղեցկազան.
30 յորմունս քոյին՝ միաւորեալ՝ յարմարական:
Ամենագօր կենարարին՝ տնօրուի՛ ըն փրկական.
որ վ՛ս մեր՝ եղեալ սիրով՝ անձառական:
Այն ևս ի քեզ՝ մեծ իմաստիւք՝ զարմանական.